ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2022 թվականի նոյեմբերի 22-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 6-րդ բ դասարանի դասարանական և ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Գոհար Ղազարյանը և տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ Զոյա Գևորգյանը և գերմաներենի ուսուցչուհի Մարինե Քոչարյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի աշակերտների հաճախումները:
2. Սովորողների վարքը դասերին և դասամիջոցներին:
3. Ընթացիկ հարցեր /կարգապահություն, ռեժիմ, հերթապահություն/:

1. Լսեցին.- Դասարանի աշակերտների հաճախումների հարցը:

Դասղեկ Գոհար Ղազարյանի ելույթը, որը ներկայացրեց առաջին ծնողական ժողովից հետո դասարանում կատարված աշխատանքների երկամսյա պատկերը՝ շեշտը դնելով աշակերտների հաճախումների ու վարքի վրա: Նշվեց, որ այս երկու ամսվա ընթացքում էական փոփոխություններ չեն կատարվել 6-րդ բ դասարանում աշակերտների ուսման առաջադիմության բարձրացման, կարգապահության ու հաճախումների հետ կապված:

Որոշեցին.

Հաճախակի դարձնել ծնողների այցը դպրոց, կատարել դասալսումներ, հետևել անկարգապահ աշակերտների վարքին և կրճատել անհարգելի բացակայությունների քանակը:

2.Լսեցին. - «Սովորողների վարքը դասերին և դասամիջոցներին» հարցը:

Այս հարցի շուրջ խոսեցին ավագները՝ ներկայացնելով կատարված իրական եղելությունները: Տեղի ունեցավ մտքերի փոխանակություն և առողջ քննադատություն: Ելույթ ունեցան նաև ծնողները: Քննարկվեցին ընթացիկ հարցեր՝ բոլորն էլ կապված բացակայությունների, ուշացումների, կարգապահության հետ:

Որոշեցին.

Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն ժամանակին, աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին պատրաստ, ու իրենք օրինակ ծառայեն իրենցից փոքրերի համար:

Ժողովի նախագահ՝ Քրիստինե Հովհաննիսյան

Քարտուղար՝ Արմինե Կարապետյան: